ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№(ID համար) _____

ք. Երևան ____ _____**202_թ.**

<<ԱՅ-ՆԵՏ>> ՍՊԸ-ը՝ ի դեմս տնօրեն Դավիթ Աբրահամյանի, գործելով ընկերության կանոնադրության համաձայն (այսուհետ Օպերատոր), մի կողմից և _____ այսուհետև՝ Բաժանորդ մյուս կողմից (այսուհետ առանձին հիշատակման ժամանակ՝ Կողմ, համատեղ հիշատակման ժամանակ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն Պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) Օպերատորը պարտավորվում է Պայմանագրում սահմանված կարգով Բաժանորդին մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունը և Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարել դրա դիմաց:

1.2 Սույն պայմանագրի իմաստով Ծառայություն է համարվում՝ մալուխի կամ անլար ցանցի միջոցով Բաժանորդի համակարգչի կամ այլ Wi-Fi սարքի/ռոուտերի միացումը համացանցին և/կամ հեռուստաալիքների վերահաղորդումը:

1.2.1 Ծառայության ներառումները տրամադրվում են ըստ ընտրված փաթեթի, որոնք նշված են հրապարակային օֆերտայում և/կամ պաշտոնական կայքում՝

Փաթեթ		
○ iNet S 25-3990	○ iNet M 35-4990	○ iNet L 50-5990
○ FTTx S 50-3900	○ FTTx M 150-5500	○ FTTx XXL 300-6900
○ Double S 50-6900	○ Double M 150-8500	○ Double XXL 300-9900
○ CaTV-4000		

1.2.2 Ծառայություններին կից տրամադրվում են հետևյալ լրացուցիչ ծառայությունները՝ միանվագ կամ ամսական վճարով՝

Լրացուցիչ ծառայություն	**Վճարման տարբերակ**	**Վճարման ենթակա գումար /ՀՀ դրամով/**	**Քանակ (հատ)**
	○ Միանվագ ○ Ամսական		
	○ Միանվագ ○ Ամսական		

1.3 Ծառայությունը մատուցվում է ք. Երևան, _____ հասցեում, որի միացումը կատարվել է _____բաժանարարից:

1.4 Օպերատորի կողմից տրամադրված բոլոր մալուխները, սարքերը և դետալները հանդիսանում են Օպերատորի սեփականությունը: Ծառայությունը մատուցելու համար Օպերատորը Բաժանորդին հանձնում է ստորև նկարագրված սարքավորումները, իսկ Բաժանորդը ընդունում է դրանք և իր ստորագրությամբ հաստատում սարքավորումները ստանալու և դրանց աշխատող վիճակում լինելու փաստը: Սարքավորումները վնասելու, Օպերատորին անսարք վիճակում հանձնելու կամ դրանք չվերադարձնելու դեպքում Բաժանորդը Օպերատորին պարտավոր է վճարել սարքերի գումարն ամբողջությամբ: /Սարքերի գինը ֆիքսված է Օպերատորի պաշտոնական կայքում՝ https://inetinternet.am/[1]/

Ճախսանյութեր / սարքավորումներ	**Սերիան կամ Mac հասցե**	**Շուկայական արժեք /ՀՀ դրամ/**	**Քանակ (հատ/մ.)**
○ UTP ○ FTP ○ RG6	—	150 / 250 / 150	_____/_____/_____
Fiber Optic. ○ Indoor ○ Outdoor	—	200	_____/_____
○ RF բաժանարար ○ Pigtail	_____/ կապույտ / կանաչ	3000 / 1000	_____/_____
Թվային սարք -		10000 /տասը հազար/	
Router -		9000 /ինը հազար/	

[1] https://inetinternet.am/

Premium Router -		28000 /քսանութ հազար/	
ONU/ONT -		30000 /երեսուն հազար/	
BOX -			

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Օպերատորը պարտավոր է՝

2.1.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2 Ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավել քան 36 ժամվա ընթացքում վերացնել մատուցված Ծառայության ի հայտ եկած թերություններն ու անսարքությունները,

2.1.3 Բաժանորդի կողմից միացման հայտը ստանալուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել Ծառայության մատուցումը:

2.2 Բաժանորդը պարտավոր է՝

2.2.1 Վճարել սույն պայմանագրի 1.2.1 կետում նշված տարիֆին համապատասխան ամսավճարը, 3.2.1 կետում նշված ժամկետում և ձևով,

2.2.2 Որևէ կերպ չտրամադրել/չփոխանցել/ Օպերատորի կողմից իրեն մատուցվող Ծառայությունները՝ երրորդ անձի

2.2.3 Սարքավորման համար ապահովել էլեկտրական հոսանք՝ Սարքավորման վրա նշված էլեկտրական լարման տիրույթում:

2.2.4 Չխոչընդոտել Օպերատորի աշխատանքներին:

2.2.5 Օգտվել Օպերատորի ծառայություններից **12 ամսյա ժամկետով**:

2.2.6 Բաժանորդը համարվում է 2.2.5 կետով նշված պարտավորությունը պատշաճ կատարած, եթե պայմանագրի կնքումից հետո 12 (տասներկու) ամիսների ընթացքում ամբողջությամբ վճարել է 12 (տասներկու) ամիսների ամսավճարները՝ սույն պայմանագրի 1.2.1 կետի համապատասխան չափով:

2.2.7 Մինչև 12 (տասներկու) ամսյա ժամկետի ավարտը Օպերատորի ծառայությունից հրաժարվելու դեպքում Օպերատորին վճարել տուժանք՝ **20,000 (քսան հազար) ՀՀ դրամի** չափով, ինչպես նաև վճարել մատուցված ծառայության և սպասարկման գումարները՝ այդպիսիք լինելու դեպքում:

Սույն կետի իմաստով ծառայություններից հրաժարվել է համարվում 2 (երկու) և ավել ամիս անընդմեջ ամսավճար չվճարելը կամ այն ոչ ամբողջական վճարելը:

2.2.8 Ծառայությունից հրաժարվելու դեպքում 10 (տասը) օրվա ընթացքում Օպերատորին վերադարձնել իրեն տրամադրված բոլոր սարքերը և դետալները՝ դրանք ներկայացնելով սույն պայմանագրով նշված՝ Օպերատորի գտնվելու վայրի հասցեով: Սույն կետի պահանջները չկատարելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է վճարել իրեն տրամադրված սարքերի և դետալների գինը ամբողջությամբ:

2.3 Օպերատորն իրավունք ունի՝

2.3.1 Կարճաժամկետ սահմանափակում կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ՝ելնելով տեխնիկական անհրաժեշտությունից

2.3.2 Պահանջել Բաժանորդից պատշաճ և ժամանակին վճարել ամսավճարները

2.3.3 Հավելյալ Ծառայությունների համար Բաժանորդից պահանջել առանձին վճար

2.3.4 Միակողմանի կարգով հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Բաժանորդը չի վճարել տվյալ ժամանակաշրջանի /ամսվա/ կանխավճարը:

2.3.5 Բաժանորդի տարածքում ցանցային միացումներ կատարելու համար Բաժանորդից պահանջելու միացման վճար, եթե Օպերատորի կողմից օգտագործված նյութերի քանակը և կատարված աշխատանքների ծավալը գերազանցում են Օպերատորի կողմից սահմանված նորմերը և եթե դա նախօրոք համաձայնեցվել է Բաժանորդի հետ:

2.3.6 Չհաշվարկել իր օգտին սույն պայմանագրով սահմանված տույժերը:

2.4 Բաժանորդը իրավունք ունի՝

2.4.1 Միացման օրվանից **15 (տասնհինգ) օրվա** ընթացքում հրաժարվել բաժանորդային Պայմանագրից և հետ ստանալ վճարված ամսավճարը՝ ներկայացնելով միայն վճարման փաստաթղթերը:

2.4.2 Ստանալ իրեն մատուցված Ծառայությունների վերծանումները, ինչի համար Օպերատորը կարող է գանձել առանձին վճար:

2.4.3 Անվճար կարգով Բաժանորդը կարող է ժամանակավոր դադարեցնել /կասեցնել/ իրեն մատուցվող Ծառայությունները նվազագույնը **10 /տասը/ օրյա**, իսկ առավելագույնը՝ **60 /վաթսուն/ օրյա ժամկետով՝** Օպերատորին ներկայացնելով համապատասխան դիմում /էլ.փոստ կամ գրավոր/: Ընդ որում Բաժանորդի կողմից դիմումում նշված՝ Ծառայությունների մատուցումը ժամանակավոր դադարեցնելու /կասեցնելու/ ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող Ծառայություններն ավտոմատ կերպով վերսկսվում են, և Օպերատորը պարտավոր չէ Բաժանորդին այդ մասին լրացուցիչ ծանուցելու կամ հիշեցնելու: Կատարված կանխավճարների այն

մասը, որի դիմաց ծառայություն դեռևս ստացված չի եղել, ձևակերպվում են որպես կանխավճար և հաշվանցվում ծառայությունների վերսկսման ժամանակաշրջանում /ամսում/: Պայմանագրի ժամկետը համարվում է երկարաձգված բաժանորդի կողմից դադարեցված օրերի քանակով:

2.4.4 Ծառայությունների մատուցման կասեցման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում վերակտիվացում և/կամ վերամիացում կարող է կատարվել միայն նոր ժամանակաշրջանի /ամսվա/ կանխավճարի կատարման դեպքում:

2.4.5 Բաժանորդն իրավունք ունի փոփոխել Ծառայության սակագնային պլանը նախորոք տեղեկացնելով Օպերատորին՝ գրավոր կամ բանավոր տարբերակով, որի համար Օպերատորը իրավունք ունի գանձել առանձին վճար: Իսկ Օպերատորը պարտավոր է իրականացնել այդ փոփոխությունը առավելագույնը երկու աշխատանքային օրում և այդուհետ բաժանորդային վճարը հաշվարկել նոր փաթեթի գնով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Ծառայության վճարը հաշվարկվում է ըստ 1.2.1 կետում ընտրված տարիֆի, որը ներկայացված է հրապարակային օֆերտայում և/կամ պաշտոնական կայքում:

3.2.1 Պայմանագրով սահմանված գումարը Բաժանորդի կողմից վճարվում է մինչև յուրաքանչյուր ամսվա 15 /տասնհինգը/՝ բանկային փոխանցման, վճարային տերմինալների միջոցով Օպերատորի՝ Պայմանագրով նշված հաշվին կամ հաշվեհամարին՝ կանխավճարային եղանակով: Բաժանորդը ծառայությունները ստանում է իր նախորոք վճարած գումարին համապատասխան:

3.2.2 Կախված աշխարհագրական դիրքից՝ Ծառայության միացման համար Օպերատորը կարող է պահանջել հավելյալ գումար, որի չափը ամրագրված է 1.2.2 կետում:

3.2.3 Առանց Օպերատորի կողմից ծանուցման Ծառայությունների մատուցումը կասեցվում է, եթե բաժանորդը չի կատարել տվյալ ամսվա կանխավճարային մուծումը:

3.3 Պայմանագիրը կնքվում է **12 /տասներկու/ ամիս** ժամկետով: Պայմանագիրը յուրաքանչյուր անգամ համարվում է վերակնքված **12/տասներկու/ ամիս** ժամկետով, եթե Կողմերից մեկը սույն պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 15/տասնհինգ/ օր առաջ մյուս կողմի Պայմանագրով նշված էլ. փոստին ծանուցմամբ չի հրաժարվում դրանից:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սխալի կամ անսարքության մասին Բաժանորդը պարտավոր է անհապաղ հայտնել Օպերատորին՝ գրավոր կամ հեռախոսազանգի միջոցով: Ուշացման դեպքում Օպերատորը պատասխանատվություն չի կրում հայտնելուն նախորդող ժամանակահատվածի համար:

4.2 Օպերատորը պատասխանատվություն չի կրում մեկ ամսվա ընթացքում 48 ժամ ծառայություն չմատակարարելու համար այն դեպքում, երբ մատակարարումը դադարեցվել է ոչ իր մեղքով: 48 ժամը լրանալուց հետո պարտավոր է յուրաքանչյուր չօգտագործված օրվա համար փոխհատուցել համապատասխան ժամերի քանակով Ծառայություն մատուցելով:

4.3 Օպերատորը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման հետ կապված միայն այն սխալների և անսարքությունների համար, որոնք գտնվում են իր պատասխանատվության և վերահսկողության ներքո: Օրինակ՝ եթե սխալների և/կամ անսարքության պատճառը Սարքավորումից հետո է կամ էլեկտրաէներգիայի բացակայությունը, տատանումը և այլ իրադարձություն, որը դուրս է Օպերատորի վերահսկողությունից, Օպերատորը պատասխանատվություն չի կրում:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Կողմերը համաձայնության են գալիս, որ սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած բոլոր վեճերը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվում են ՀՀ-ում մշտապես գործող Արբիտրաժային տրիբունալներից որևէ մեկին, որտեղ գործի քննությունը իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքին համապատասխան:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Պայմանագիրը համարվում է երկկողմանի ստորագրված, եթե Բաժանորդը Օպերատորի տրամադրած էլեկտրոնային հարթակում համաձայնվելով Օպերատորի կողմից ներկայացված օֆերտայի բոլոր պայմաններին և լրացնելով իր՝ Պայմանագրի կնքման համար անհրաժեշտ տվյալները, հաստատում է այն:

7.2. Կողմերը հաստատում են, որ սույն պայմանագրի իմաստով Կողմերը պատշաճ ծանուցված են համարվում ինչպես պայմանագրում նշված բնակության և/կամ հաշվառման հասցեներով ուղարկված ծանուցումներով, այնպես էլ էլեկտրոնային փոստին և հեռախասահամարին ուղարկված հաղորդագրություններով:

7.3. Ծանուցումը էլեկտրոնային փաստին կամ հեռախոսահամարին ուղարկելուց հետո 1 /մեկ/ օր անց մյուս կողմը համարվում է պատշաճ ծանուցված:

7.4. Սույն պայմանագրով նշված հասցեի, էլեկտրոնային հասցեի, հեռախոսահամարի և/կամ Պայմանագրով նշված այլ տվյալի փոփոխության դեպքում Կողմերը պարտավորվում են միմյանց տեղյակ պահել դրա մասին 7 /յոթ/ օրվա ընթացքում՝ Պայմանագրով նշված հասցեին ծանուցման միջոցով: Սույն կետով նշված պահանջը չկատարելու դեպքում Պայմանագրով նշված, թեկուզև փոփոխված հասցեին ուղարկված ծանուցումը, համարվում է պատշաճ:

7.5. Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը հաստատում է, որ ծանոթացել է Օպերատորի պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությանը՝ սարքերի և դրանց գների վերաբերյալ և համաձայն է դրանց հետ:

7.6. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, եթե հայերեն տարբերակից բացի Պայմանագիրը ստորագրված է նաև այլ լեզվով, ապա հայերեն տարբերակը գերակայություն ունի:

7.3 Օպերատորը իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխել Ծառայությունների մեջ ներառված վերահաղորդվող հեռուստաալիքների ցանկը ու քանակը առանց նախապես ծանուցելու Բաժանորդին, իսկ սակագների փոփոխման դեպքում պարտավորվում է 20 օր առաջ նախորոք տեղեկացնել Բաժանորդին: Նոր սակագնի հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը 15 օրվա ընթացքում տեղեկացնելով կարող է հրաժարվել պայմանագրից: Հակառակ դեպքում Պայմանագիրը շարունակում է գործել կողմերի միջև նոր պայմաններով և նոր Սակագնի հիման վրա:

7.4 Բաժանորդը պարտավոր է վճարել Օպերատորին 1.2.1 կետում ֆիքսված միացման աշխատանքների վճարը՝ մոնտաժային աշխատանքների համար, պայմանագրի կնքումից հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, որը ենթակա չէ վերադարձման:

8. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

ՕՊԵՐԱՏՈՐ	**ԲԱԺԱՆՈՐԴ**
<<ԱՅ-ՆԵՏ>> ՍՊԸ	Ա.Ա.Հ. _____
ՀՎՀՀ 00147253	Անձնագրի սերիա/համար_____
	ՀԾՀ_____
Հեռախոս (060) 888 000	ում կողմից_____
Հ/Հ “ԱՄԵՐԻԱԲԱՆԿ” ՓԲԸ	տրվել է_____
1570049564450100	Հասցե _____
Վեբ կայք՝ www.i-net.am	Հեռ/բջջ_____
Էլ.փոստ՝ info@i-net.am	Էլ.փոստ_____
Տնօրեն՝ Դ.Աբրահամյան	

_____ (ստորագրություն/կնիք)

_____ (ստորագրություն)